

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ա-2

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25». 01. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ «ԳԱԱ»), որը գործում է ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Աշոտ Սաղյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված **14182700 (տասանչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները*, *դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

#### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

##### 2.1 ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## **2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## **2.3 ԳԱԱ-ն պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## **2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Օրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ,
- 2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Օրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Օրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Օրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,
- 2.4.11 Օրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### **3 Օրագրի ֆինանսավորման չափը**

Օրագրի ֆինանսավորման չափը կազմում է **14182700 (տասնչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:**

#### **4 Մոնիթորինգ**

**4.1** ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

#### **5 Վճարման կարգը և ժամկետները**

**5.1** ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

#### **6 Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

#### **7 Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

#### **8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և

որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

**9.1** Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

**9.2** Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

**9.3** Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:


10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները  
 ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
 ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
 ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»  
 գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ  
 ք. Երևան, Գյուրջյան 14

Հ/հ 900011024115  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ք. Երևանի թիվ 1 ՏԳԲ  
 Հ/հ 900018005729  
 ՀՎՀՀ 00871944

Նախագահ՝   
 (ստորագրություն)  
  
 ՌԱՊԱԿ ՄԱՐՏԻՈՍՅԱՆ  
 Գ.Տ.

Տնօրեն՝   
 (ստորագրություն)  
  
 ԱՇՈՑ ՄԱՂՅԱՆ  
 Գ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝   
 (ստորագրություն)

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան)

Հավելված N 1  
«25» 01 2021 թ.  
N Ա-2 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Սաղյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N Ա-2 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 14182700 (տասնչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»  
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Նախագահ՝

  
(ստորագրություն)  
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տնօրեն՝

  
(ստորագրություն)  
ԱՇՈՏ ՍԱԳՅԱՆ

## ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Աշխատանքի նպատակն է մանրէների կուլտուրաների ազգային հավաքածուի համալրումը տարածաշրջանին բնորոշ մանրէների տեսակներով, որոնք հանդիսանում են հացաթխման, ավանդական կաթնաթթվային մթերքների մերանների, կենսապարարտանյութերի, կերային և այլ կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության կարևոր նախադրյալ: Ուշադրություն է դարձվելու սպորավոր բակտերիաների, ինչպես նաև մանրէների էքստրեմոֆիլ ձևերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը՝ որպես տարբեր կենսաբանական ակտիվ միացությունների արտադրիչների:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Աշխատանքը պետք է կատարվի որպես գիտական հետազոտություն՝ նպատակահարմարության հիմնավորմամբ, արդյունավետության և տեխնոլոգիական տեսակետից ցուցանիշների համեմատական վերլուծության հիման վրա: Դրանում պետք է ընդգրկվեն գիտական, տեխնոլոգիական, տեղեկատվական և մտավոր տեխնոլոգիաների ոլորտների արդի առաջարկությունները: Աշխատանքում պետք է ստույգ նշվեն կատարողների, գիտական ստորաբաժանումների նվաճումները, ինչպես նաև գիտական արդյունքների կիրառման ոլորտները: Աշխատանքում արժարժված խնդիրները, դրանց լուծումները անհրաժեշտ է հնարավորինս լինեն ինքնատիպ:

Գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում ստացված բոլոր նյութերը պետք է ընդհանրացվեն, համակարգվեն և ներկայացվեն եզրափակիչ հաշվետվությունում, որում տրամաբանական հաջորդականությամբ, ստացված տվյալների փաստարկմամբ պետք է նշվեն հետազոտության հիմնական և (կամ) ամենակարևոր արդյունքները:

4. Աշխատանքի բովանդակությունը:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի «Մանրէների ավանդադրման կենտրոն» (ՄԱԿ) հիմնարկի հետազոտությունների հիմնական ուղղությունը՝ Հայաստանի մանրէային բազմազանության ուսումնասիրությունն է, մանրէների տարբեր խմբերի (բակտերիաներ, միտոսպորիկ սնկեր, շաքարասնկեր, ճառագայթասնկեր, ջրիմուռներ)

մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական առանձնահատկությունների պարզաբանումը: Մանրէների մեծամասնությունը ներկայացված է յուրօրինակ շտամերով, որոնք արտացոլում են Կովկասյան տարածաշրջանի կենսաբանական և բնակլիմայական բազմազանությունը:

Մանրէների հավաքածույում պահպանվում են տնտեսության տարբեր բնագավառներում օգտագործվող բազմաթիվ մանրէային կուլտուրաներ՝ կենսաբանական ակտիվ միացությունների արտադրիչներ, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի նպատակով օգտագործվող միջատասպան շտամեր, սինթետիկ պոլիմերային միացություններ քայքայող սնկեր և այլն:

Հավաքածուի մանրէների շտամերի կենսունակության և վերարտադրողականության ապահովման համար կարևոր է դրանց երկարատև պահպանման արդյունավետ եղանակների մշակումը:

Ոչ սպորավոր բակտերիաների առանձին խմբերի, այդ թվում կաթնաթթվային բակտերիաների պահպանումը կենսունակ վիճակում, իրականացվում է համապատասխան սննդամիջավայրերում պարբերական վերացանքների միջոցով, իսկ երկարատև պահպանման համար օգտագործվում է ցածր ջերմաստիճաններում պահպանման մեթոդը՝ 20% գլիցերինի միջավայրում -20°C-ի պայմաններում:

Շաքարասնկերի պահպանման արդյունավետ մեթոդը ստերիլ վազելինի յուղի տակ և պինդ ազարային սննդամիջավայրերում պահպանումն է, իսկ միտոսպորիկ սնկերի և բազիդիումիցետների համար պահպանումը իրականացվում է վազելինի յուղի տակ:

Ծրագրի կատարման ընթացքում նախատեսվում է ուսումնասիել նոր մեկուսացված էնտոմոպաթոգեն բացիլների հատկությունները, նրանց միջատասպան ակտիվությունը, որը հիմք կհանդիսանա գյուղատնտեսական վնասատուների դեմ կենսապատրաստուկների արտադրության կազմակերպման համար:

Կշարունակվեն կաթնաթթվային բակտերիաների ուսումնասիրության և դասակարգման աշխատանքները, այդ թվում ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Ուսումնասիրություններ կիրականացվեն նաև սինթետիկ պոլիմերային նյութերը քայքայող միտոսպորիկ սնկերի ուսումնասիրության ուղղությամբ:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանման «Մանրէների Ազգային Հավաքածուի՝ գենաֆոնդի ստեղծումը և պահպանումը» ծրագրի շրջանակներում 2021թ. նախատեսված աշխատանքները՝

***Առաջին կիսամյակ՝***

- Մանրէների Ազգային հավաքածուի, որը ներառում է սպորառաջացնող և ոչ սպորավոր բակտերիաների, շաքարասնկերի, սնկերի և այլ խմբերի մանրէների շտամեր՝ նրանց պահպանումը կենսունակ վիճակում և անձնագրավորումը,



- սնկերի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում, այդ թվում ածխածնի աղբյուրների յուրացումն աուքսանոգրաֆիայի եղանակով (15 շտամ),
- էնտոմոպաթոզեն բակտերիաների միջատասպան ակտիվության որոշում թեփուկաթևավորների նկատմամբ,
- սպորառաջացնող թերմոֆիլ բակտերիաների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում (15 շտամ),
- ոչ սպորավոր բակտերիաների՝ *Pseudomonas* ցեղի (30 շտամ) և ֆիտոպաթոզենների (30 շտամ), ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում,
- կաթնաթթվային բակտերիաների կուլտուրալ, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում (25 շտամ):

***Երկրորդ կիսամյակ՝***

- Մանրէների ազգային հավաքածուի պահպանումը կենսունակ վիճակում և կրիոկոնսերվացիա,
- կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային ակտիվության հետազոտում (25 շտամ),
- էնտոմոպաթոզեն բակտերիաների միջատասպան ակտիվության ուսումնասիրում կարծրաթևավորների նկատմամբ,
- *Rhodococcus* ցեղի և ոչ սպորավոր բակտերիաների այլ խմբերի շտամերի ածխաջրածնի յուրացման ուսումնասիրում,
- միտոսպորիկ սնկերի երկարատև պահպանում վազելինի յուղի տակ (100 շտամ),
- վազելինի յուղի տակ պահպանվող շաքարասնկերի վերարտադրողականության ստուգում (100 շտամ),
- 40 ճառագայթասնկերի և 16 թերմոճառագայթասնկերի շտամերի կենսունակության և վերարտադրողականության ուսումնասիրում:

**5. Ակնկալվող արդյունքները:**

Համաձայն ՀՀ Կառավարության N 610 առ 03.12.1993թ. Որոշման, ՄԱԿ-ի առջև դրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ գիտաարտադրական նշանակության մանրէների ստացում, հավաքագրում և պահպանում: Ըստ Որոշման՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունները, հիմնարկները, կազմակերպությունները պարտավոր են ՄԱԿ-ում ավանդադրել գիտական և արդյունաբերական նշանակություն ունեցող մանրէների շտամեր:

ՄԱԿ-ի աշխատանքները սերտորեն ինտեգրված են ԳԱԱ “Հայկենսատեխնոլոգիա” ԳԱԿ-ի ստորաբաժանումների գիտահետազոտական աշխատանքներին: Մանրէների հավաքածուն հիմք է հանդիսանում արտադրական նշանակություն ունեցող արդյունավետ շտամերի ստացման համար:


Կատարվող հիմնարար հետազոտությունների հետ զուգահեռ նախատեսվում է ընդլայնել շտամերի ավանդադրման, տրամադրման և այդ ուղղությամբ ծառայությունների մատուցման աշխատանքներ:

Նախատեսվում է ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում արտադրվող «Նարինե» կաթնամթերքի հենքի վրա շարունակել նրա մրգային նոր տեսակների և ավանդական յոգուրթի արտադրությունների կազմակերպումը: ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի վեբ-կայքում կտեղադրվեն անհրաժեշտ տեղեկություններ արտադրական նշանակություն ունեցող առավել ակտիվ մանրէների վերաբերյալ (շաքարասնկեր, կաթնաթթվային բակտերիաներ և այլն): Կամփոփվեն նրանց բնութագրող առանձնահատկությունները և կկազմվի յուրաքանչյուր նոր շտամի «անձնագիրը»:

Կշարունակվեն փորձարկման հետազոտություններն առանձին տեսակի միջատասպան մանրէների և սինթետիկ պոլիմերային միացություններ քայքայող սնկերի ուսումնասիրման ուղղությամբ, ինչը կարևոր նշանակություն կարող է ունենալ բնապահպանության ոլորտում՝ թափոնների արդյունավետ վերամշակման համար:

Աշխատանքները հիմք կհանդիսանան ներկայացնելու առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետությունում կաթնաթթվային մթերքների մերանների, ինչպես նաև բազմաթիվ արժեքավոր նյութերի մանրէաբանական արտադրության կազմակերպման ու զարգացման ուղղությամբ:

Աշխատանքների վերլուծության արդյունքում Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված, ինչպես նաև տեղական ամսագրերում հրատարակվեն հոդվածներ, մենագրություններ և այլ կոլեկտիվ գիտական հրապարակումներ:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝  Ա. Սարգյան

Ծրագրի գիտական ղեկավար՝  ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սարգյան



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \***

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

Հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Մանրէների պահպանում և անձնագրավորում:	Հավաքածույում պահպանվող տարբեր խմբերին պատկանող՝ շուրջ 13000 մանրէների կուլտուրաների կենսունակության ապահովում: Մանրէների անձնագրավորում՝ կենսաբանական և գենետիկական հատկությունների հիման վրա:	Մանրէների վերացանքս համապատասխան սննդամիջավայրերում: Մանրէների տվյալների բազաների համալրում:	Տարբեր խմբերին պատկանող մանրէների կենսունակության առանձնահատկությունների վերաբերյալ հրապարակումներ: Մանրէների քարտարանի 1-ին հատորի՝ «Մպորավոր բակտերիաներ» հրապարակում:	I, II, III, IV	2580,0
2.	Մանրէների կենսաբանական առանձնահատկությունների հետազոտում:	Մնկերի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Մնկերի՝ 15 շտամերի երկրորդային նյութափոխանակության ուսումնասիրում, ներառյալ ածխածնի աղբյուրների յուրացումն աուքսանոգրաֆիայի եղանակի կիրառմամբ:	Տարբեր տեսակների սնկերի երկրորդային նյութափոխանակության համեմատական բնութագրության մասին մեկ հրապարակում:	I, II	1290,0

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

Մանրէների կենսաբանական առանձնահատկությունների հետազոտում:	Էնտոմոպաթոգեն բակտերիաների հատկությունների ուսումնասիրում:	Մի շարք էնտոմոպաթոգեն բակտերիաների միջատասպան ակտիվության հայտնաբերում թեփուկաթևավոր միջատների նկատմամբ:	Միջատասպան ազդեցության և բույսերի պաշտպանության արդյունավետության մասին եզրակացություն-հոդվածի հրապարակում:	I, II	1290,0
		Մի շարք էնտոմոպաթոգեն բակտերիաների միջատասպան ակտիվության հայտնաբերում կարծրաթևավոր միջատների նկատմամբ:		III, IV	1290,0
	Սպորառաջացնող թերմոֆիլ բակտերիաների հատկությունների ուսումնասիրում:	Սպորառաջացնող թերմոֆիլ բակտերիաների՝ 15 շտամերի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Սպորառաջացնող թերմոֆիլ բակտերիաների՝ 15 շտամերի կենսաբանական հատկությունների մասին հաշվետվություն:	I, II	1290,0
	Ոչ սպորավոր բակտերիաների հատկությունների ուսումնասիրում:	<i>Pseudomonas</i> ցեղին պատկանող (30 շտամ) և ֆիտոպաթոգեն բակտերիաների (30 շտամ) ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	<i>Pseudomonas</i> ցեղին պատկանող և ֆիտոպաթոգեն բակտերիաների համեմատական կենսաբանական հատկությունների վերաբերյալ հաշվետվություն:	I, II	1290,0
		<i>Rhodococcus</i> ցեղի և ոչ սպորավոր բակտերիաների այլ խմբերի շտամերի ածխաջրածնի յուրացման ուսումնասիրում:	<i>Rhodococcus</i> ցեղին պատկանող բակտերիաների ածխաջրածնի յուրացման վերաբերյալ հաշվետվություն:	III, IV	1290,0

	Մանրէների կենսաբանական առանձնահատկությունների հետազոտում:	Կաթնաթթվային բակտերիաների հատկությունների ուսումնասիրում:	Կաթնաթթվային բակտերիաների՝ 25 շտամերի կուլտուրալ, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Կաթնաթթվային բակտերիաների համեմատական կենսաբանական առանձնահատկությունների հիման վրա, առավել հեռանկարային շտամերի ընտրություն՝ առևտրայնացման նպատակով: Շտամի/շտամերի աճեցման պայմանների նախադրյալների մշակում:	I, II	1290,0
			Կաթնաթթվային բակտերիաների՝ 25 շտամերի հակամանրէային ակտիվության հայտնաբերում և որոշում:	Կաթնաթթվային բակտերիաների՝ 25 շտամերի հակամանրէային ակտիվության մասին հաշվետվություն:	III, IV	1290,0
3.	Մանրէների երկարատև պահպանում և վերարտադրողականություն:	Մանրէների երկարատև պահպանում և վերարտադրողականություն՝ տարբեր մեթոդների կիրառմամբ:	<ul style="list-style-type: none"> <li>- միտոսպորիկ սնկեր՝ շուրջ 100 շտամ,</li> <li>- շաքարասնկեր՝ շուրջ 100 շտամ,</li> <li>- ճառագայթասնկեր՝ շուրջ 40 շտամ,</li> <li>- թերմոճառագայթասնկեր՝ շուրջ 15 շտամ:</li> </ul>	Երկարատև պահպանման և վերարտադրողականության արդյունավետության մասին հողվածի հրապարակում:	III, IV	1282,7
<b>Ընդամենը՝</b>						<b>14182,7</b>

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝  Ա. Սաղյան

Ծրագրի գիտական ղեկավար՝  ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան




ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	10992,0	2198,4	2748,0	2748,0	3297,6
2	տնտեսական և այլ ծախսեր*	3190,7	638,1	797,7	797,7	957,2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>14182,7</b>	<b>2836,5</b>	<b>3545,7</b>	<b>3545,7</b>	<b>4254,8</b>

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝  Ա. Սաղյան

Գլխավոր հաշվապահ՝  Լ. Մելքոնյան



\* Բուժներում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված N 4.1  
 « 25 » 01 2021 թ.  
 N 14-2 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	798,0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	487,0
	գազի ծառայություն	169,0
	ջրանատակարարման ծառայություն	14,0
	կապի ծառայություն	106,0
	աղբահանություն	22,0
2	Գույք	-
3	Սարքեր և սարքավորումներ	1000,0
4	Նյութեր	410,7
5	Գործուղումներ	-
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արժավախմբեր	100,0
8	Հրատարակման ծախսեր	210,0
9	Տրանսպորտային ծախսեր	300,0
10	Մանրէների նույնականացման ծախսեր	300,0
11	Անվտանգության ապահովման ծախսեր	72,0
Ընդամենը		3190,7

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝



Ա. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝



Լ. Մելքոնյան




\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Ղազանյան Նարինե Լևոնի	գիտաշխատող, ՄԱԿ հիմնարկի ղեկավարի տեղակալ, Մպորավոր բակտերիաների և ճառագայթասնկերի հավաքածուի պատասխանատու	-	140,0
2	Զիտյան Կարինե Վիրաբի	ավագ գիտաշխատող, Շաքարասնկերի և կաթնաթթվային բակտերիաների հավաքածուի պատասխանատու	կ.գ.թ.	140,0
3	Կինոյան Մարինա Համազասպի	գիտաշխատող, Հավաքածու համադրող, ոչ սպորավոր բակտերիաների հավաքածուի պատասխանատու	-	125,0
4	Խաչատրյան Նունե Սամուելի	գիտաշխատող, Ցածրակարգ և բարձրակարգ սնկերի հավաքածուի պատասխանատու	-	125,0
5	Գևորգյան Սոնա Արտավազի	գիտաշխատող	-	76,0
6	Հարությունյան Աստղիկ Երվանդի	մանրէների հավաքածուների էլեկտրոնային տվյալների բազաների համակարգող	-	120,0
7	Ալիխանյան Անգին Ակտիվի	Ավագ լաբորանտ	-	95,0
8	Չոլախյան Լարիսա Հրանտի	Ավագ լաբորանտ	-	95,0
Ընդամենը				916,0

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝  Ա. Սաղյան

Կադրերի բաժնի պետ՝  Ռ. Մաթոսյան

